

**«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ բանկային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ**

05.01.2022թ. ԹԻՎ 1/01ԲԳ-Ա

**«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումների համար Բանկի նկատմամբ կիրառել **նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ թույլ չտալուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու և մինչև 27.01.2022թ. դրանց արդյունքների վերաբերյալ Կենտրոնական բանկ տեղեկատվություն ներկայացնելու հանձնարարականներով:**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բանկ մուտքագրվելու կամ Բանկի սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով երկամսյա ժամկետում բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ